

ու վառ իղձերով լի մի երիտասարդ, կեանքի և ճշմարտութեան ծարաւ մի հոգի: Դիպի քաղաքակիրթ լուսաւոր աշխարհի՝ զիտութեան ու արուեստի հրաշարուխ աղբիւրից իմաստութեան կամքն ըմբելու, սակայն չէ արուեստական է այդ կաթր, քաղցրացնում է քիմքը բայց ներքին ծարաւը չէ յափեցնում. չէ այդ քաղաքակիրթ աշխարհի մէջ ամենայն օր գէպքեր են տեղի ունենում: որոնք բարոյական սնանկութեան յայտաբարներ են՝ ապացոցներ, որ մոքի կրթութիւնը սրտի կրթութեան հետ զուգընթաց չէ գնում այնտեղ, որ ոսկի չէ այն ամենը: ինչ որ արուեստը փայլեցնել գիտէ: — Դիպի բնութեան զիրկը: բայց բնութիւնը սառն է, անտարբեր ոչ միշտ այս մռայլ օրերում: երբ ամսին ու փոթորիկը, ձիւնն ու սառոցն են իշխում զուրսը այլ նաև գեղազուարծ գարնան, երբ կանաչում է ու ծաղկում ամենուրեք. բնութիւնը այն ժամանակ է միայն գեղեցիկ, երբ մեր գեղեցիկ զգացումներով հոգի ու շունչ ենք տալիս նորան, ստիպում ենք վերարտադրել մեր սրտի խորքում շարժող գաղտնի յոցքերը. մի կամթիլ այդ յոցքերից աւելի անհուն է և ընդարձակ երբեմն, քան համատարած ծովը մեր առջեւ. հոգւոյ մի վսեմ թռիչքն աւելի բարձր, աւելի հեռու է սրլանում, քան այն ջինջ կապոյտ երկնակամարը, որ մի տիեզերք է պարփակում իւր մէջ:

Ուր գիմենք ուրեմն, դէպի անցեալը, դէպի այն հրաշալի պատմութիւններով և մեծանուն հերոսներով հարուստ անցեալը, ուր մանր հոգսերն ու չնշին արարքները հեշտութեամբ մոռ ացուում են և ամեն ինչ վսեմ: Խորհրդաւոր գոյներով է նկարուում: ուր բարին ու շարն, ազնիւն ու անարդը արգարութեամբ գատուում են՝ փառք ու պատիժ ստանում: Սակայն անցեալը մեռած է, մեռած են ամենամեծ հերոսներն իսկ ու այլ ևս չեն վերակենդանանայ, անցած են ամենանշանաւոր սիրագործութիւններն ու մեզ նոր կեանք տալ չեն կարողանայ. Դու միայն ևս կենդանի, կենդանարար Փրկիչ. Զո կանգնած ծեղեցին է միայն, որ գժոխիք դռներից չէ յաղթահարուում՝ այն մի ընդհանրական: սուրբ եկեղեցին ուր ժողովուում են քո սուրբ անուան առաջ ծունկ խոնար-

հողները, չօր հոգւով և ծշմարտութեամբ երկպագողները ուր խոսացար լինել և ես միշտ՝ կենդանի և կենդանարար, որ հինը նոր ես գարձնում, ամենակուլ ժամանակը վերանորոգում: որ միշտ մանուկ ես և միշտ ծեր, միշտ ներկայ և միշտ ապառնի, միշտ մօտիկ քեզ կարօտով զիմողներին և ամենքի կարօտը լցուցանող: որ քո կենսառատ խօսքով ամենապառած սրտերն անզամ կակացներ թշուառութեան ամենամութ անկեններում լցու և միսիթարութիւն սփռել կարող ես: «Ճէր, առ ով երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս ։»

Կ. Ա.



Ա. Ա. Տ. Ա. Յ. Ա. Ֆ. Ա. Յ. Ա. Թ. Ի. Ի. Ա. Տ. Ա. Ն. Ա. Պ. Հ.

ԱՐԴԱՐՈՒԹԵԱԸՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ.

Իշր այն սրբազն լերան ստորտում թիսուսի շուրջ կուտուել էր ժողովրդի բազմութիւնը լսելու համար նորանից, թէ ո՞ւ է, երբ պէտք է գայ Երկնքի արքայութիւնը, որի մերձ լինելը նա աւետել էր, և թէ ինչ պէտք է անեն իրենք այդ արքայութիւնը ժառանգելու համար՝ նորա արտասանած առաջին խօսքն էր, «Երանի հոգւով աղքատներին, որովհիտե նոցան է Երկնքի արքայութիւնը: Դորանով ի հարկ է նա չկամեցաւ ասել, թէ իւր ունկնդիրների մէջ արդէն կային մարդիկ, որոնք արքայութեան մասնակից էին, կամ իրենք իրենց կարող էին այդ արքայութիւնը ձեռք բերել: աղքատ լինել մի բան չունենալ է նշանակում և ոչ ունենալ, իսկ ով Երկնքի արքայութիւնն ունի, ունի արդէն ամենամեծ բարիքը, աղքատ չէ ուրիմ: Մատմ, է. 11. Թիսուս բոլոր մարդոց անխստիր չար է անուանում և չէր կարող մի ուրիշ անզամ առիթ տալ ենթադրելու թէ նոցա մէջ բարիներ, արգարներ ևս կան: Իւր հրապարակյին գործունկութիւնը սկսում է նա, ինչպիս և Յովհաննէս Մկրտիչ, բոլոր մարդոց ապաշխարութիւն քարոզելով՝ ապաշխարութիւ-

նըս այսինքն հոգեւոր կերպարանափոխութիւնն ու վերանորոգութիւնը, Երկնքի արքայութիւն մանելու համար իրեւ պայման դնելով՝ չընդունելով ուրեմն, որ նոցա մէջ գտնուում էին արդէն արքայութեան համար պատրաստներ։ Եւ այսպէս, երբ Նա իւր աստուածային թերանը բաց է անում Երկնքի արքայութիւն աւետելու՝ Նորա աշքը կանգ է առնում ոչ թէ այնպիսիների վերայ, որոնք այդ բարիքն ունեին։ բոլոր այդտեղ կանգնողները կարօտեալներ էին, և Նա ինքը միայն բոլոր բարիքների ամփոփումն, Երկնքի արքայութեան մարմացումն լինելով՝ կարող էր նոցա կարօտը լցուցանել, աշա բանում է Նա ճանապարհ գորա համար, և այդ ճանապարհով գնալ ու երանութեան համել պիտի կարողանային իւր ունինդիներից նոքա, որոնք հոգով աղքատ էին, որոնք զգում էին իրենց հոգեար կեանքի կարիքներն ու լցուցանել ձգտումն ինչպէս սովորական աղքատները իրենց մարմանաւոր կեանքի կարիքներն են զգումն Ամեն հրէայ գիտեր, որ Աստուծոյ արքայութեան մասնակից լինելու համար Աստուծոյ հաճելի պէտք է լինել, արդար պէտք է լինել առկայն՝ մինչդեռ նոցա կարծիքով ամենից արդարները զգիլիներն ու փարիսեցիներն էին, որովհետեւ օրէնքի ամեն մի տառը ձըշդութեամբ պահում էին և ուրեմն Աստուծոյ շնորհակալութեան արժանի շատ գրքեր ունեին կատարած՝ Քրիստոս մի անդամ ընդ միշտ կամենում է հերքած լինել այդ կարծիքը ցոյց տաղով, որ արքայութիւնը միայն նոցա համար է բայց որոնք իրենց արդար լինելը գիտեն և իրենից՝ Երկնքի արքայութեան հիմնադրից, պէտք է ծամարիտ արդարութիւն սովորեն, և ընդհակառակն ուրեմն փակ նոցա համար միայն որոնք իրենց արդէն իսկ արդար են համարում։

Արդ, որն է այն արդարութիւնը, որ մարդիկ չունեին և Քրիստոս պէտք է տար։ Ինչպէս որ իւր քարոզութեան սկզբում այդ արդարութիւնը ընդունելու համար Նա պահանջում է աղքատ հոգի, հեղու մաքուր սիրտ ունենալ սկալ կատարեալ զղման արտասուրքներով մեղքերը լրաւանալ և ամբողջապէս Աստուծոյ կամքի առաջանութեան վրայ հսկում է և զանցառութեան համար պատճում նոյն օրէնքը։ Քրիստոս ընդունում է հարկաւ, որ այդ օրէնքը իւր չօր կտմքի արտայայտութիւնն է

սպասել՝ այնպէս էլ իրեւ վերջնական նպատակ և եղրակացութիւն լուր ցոյց առուած արդարութեան, որոշում է Մատթ. Է. գլուխ վերջում՝ կատարեալ լինել ինչպէս որ մեր Երկնաւոր Հայրը կատարեալ է, իսկ պարզելու համար, թէ արդարութիւնը, աղքատ հոգու մէջ մի անդամ արմատ բռնելուց յետոյ, ինչ ճանապարհով է զարգանում և մեզ այդ բարձր նպատակին հասցնում՝ Քրիստոս կարեւոր է համարում բացատրել նախ, թէ ինչ նշանակութիւն պէտք է ունենայ այս գէպքում չին կտակարանը, ինչ դեր պէտք է կատարէ, նթէ արդարութեան նպատակն է, որ մենք Աստուծոյ նման կատարեալ լինինք, այսինքն գործենք ամեն պարագայում ինչպէս Աստուծոյ ինքը կգործէր, կամ կկամենար որ մենք գործենք՝ ուրեմն մեզ յայտնի պէտք է լինի նախ Աստուծոյ կամքը, իսկ Աստուծոյ իւր կամքը յայտնել է արդէն չին Ուխտի մէջ բազմաթիւ պատուիրաններով և պատպամներով, բնական է ուրեմն, որ ամեն մի հրէսց մեզնից ամեն մէկը հարցնէր, արդեօք Քրիստոսի քարոզած արդարութեամբ վեցուում է չին Ուխտի օրէնքը, թէ պահում է իւր նշանակութիւնը. Նա պատասխանում է. «Մի համարիք, եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմորգարէս, ոչ եկի լուծանել այլ լուսը» և եթէ մեզ համար պարզ լինի, թէ Նա ինչպէս է լցուցանում օրէնքը, կպարզուի նաև արդարութեան ճանապարհը։

Ինչպէս այստեղ Ամեստարանի երան մօտ, մի պայծառ խաղաղ օր ժողովուել էին ասպաշիարութեան ու նոր կեանքի կարօտ մարդիկ՝ զալց երանութեան հոգեպարար աւետեաց խօսքերը խելու, այնպէս և երբեմն Սինա լեռան հանդէպ Աստուծոյ ընարեալ ժողովուրդն էր ներկայացել՝ սրբուած ու պատրաստ և լսել աշխաւ և դողութեամբ, որու ու կայծակի միջից, Երկնաւոր Թագավորի պատպամները, այդ պատպամներից մէկն էր. «Մի սպանաներ», կտրուկ ու խիստ մի օրէնք, որի անվմար պահպանութեան վրայ հսկում է, և զանցառութեան համար պատճում նոյն օրէնքը։ Քրիստոս ընդունում է, հարկաւ, որ այդ օրէնքը իւր չօր կտմքի արտայայտութիւնն է

և պէտք է կատարուի, բայց դիտէ, որ իւր չայրը մի երկրաւոր գատաւոր չէ՝ միայն արտաքին գործողութիւնների վերայ հսկելու և նոցա համաձայն գատելու ընդունակի, այլ որ նա մարդոց ներքինը ևս տեսնում է և պահանջում որ այնանդ ժագնուած խորհուրդները նոյնպէս իւր կամքի համապատասխան լինին, և ոչ միայն արաւաքին գործերը, ուստի Քրիստոս ցոյց է տալիս որ այդ օրէնքն այն ժամանակ միայն կարելի է կատարեալ կերպով լցուցած համարել, երբ խեղդում ենք մեր մէջ ընկերին վնասելու, հոգեպէս կամ մարմնապէս զրկանք հասցնելու ամեն մի արամադրութիւն. երբ ատելութեան և վրեժինդրութեան փոխարէն մենք լեցուած ենք սիրոյ և ներսղամտութեան զգացու մնելով!—Նոյնպիսի եզրակացութիւն է հանում նա այն օրէնքի մասին, որի նպատակն էր ընտանիքի սրբութիւնը անձեռնմխելի դարձնել ինչպէս այստեղ անձի կեանքը. օրէնքը շնութիւն արգելերով ցոյց էր տալիս, որ մարդու և կնոջ մէջ եղած կասը բարոյական է, Աստծուց հաստատուած, և ով ուրեմն այդ կապի խանգարման պատճառ է լինում մեղանչում է Աստուծոյ գէմ. իսկ Քրիստոս բացարում է, որ այդպիսի խանգարումն տեղի է ունենում ոչ միայն գործով, այլ և սրտի արատաւոր ցանկութիւններով, որ ամեն մի հակարացական շարժում մարդու սրտի մէջ մեղանչումն է Աստուծոյ առաջ բաժնում է ու հեռացնում նորանից, և յաւիտենական կորստեան արժանի դարձնում թաւական չէ, ասում է Քրիստոս, որ ամուսնական կեանքը այր մարդու քմահաճութիւնների զոհ լինի, ինչպէս արամադրում է մոփիսական օրէնքը՝ պահանջելով, որ ամուսնութիւնը հաստատել տեղի ունենայ օրինական սահմաններում որոշ պայմանաթիւթերով. նախնական Աստուծոյ կամքին համապատասխան օրէնքն այն է, այն է կատարեալ ամուսնութիւնը, որ անքակտելի բարոյական կապ է հաստատում երկու անձերի մէջ և այդպիսով ընտանիքի սրբութեան, ամեն մի բարոյական կենցաղակարութիւնը հիմքը դառնում

Այսպէս հետեւով նաև Քրիստոսի յա-

ջորդ բացատրութիւններին՝ ամեն տեղ տեսնում ենք նոյն սկզբունքը. երբ Աստուծոյ կամքը մեզ իրեւ օրէնք է յայտանուած արտաքուած՝ ուշադրութեան է առնում բնականարար մեր արտաքին յարաբերութիւնները միայն, և մենք ըստ երեսութիւն կատարած ենք լինում նորա պահանջը, երբ արտաքին արամանքներով համակերպում ենք նորանարացած երբ նոյն կամքը արտայայտառում է իւր բոլոր կատարելութեամբ՝ իրեւ մի կենդանի քարով՝ ուղղուած գէպի մեր ներքին աշխարհը, իրեւ հօգիտացած ծշմարտութիւն, որ մեր սրտի և հոգւոյ հետ է խօսում՝ մենք միայն մեր բոլոր ներքին արամադրութիւնները նորա համաձայն ուղղելով կատարած կիննիք նորա պահանջը, որով և օրէնքը իսկապէս ցուցած: Ահա այս ըմբռնմամբ է, որ Քրիստոս ոչ միայն յիշեալ պատուիրանների նկատմամբ օրէնքը չէ լուծում այլ նաև այն գէպքում երբ պատուիրում է ամեննեին մի երգնուուր, կամ մի՛ կալ հակառակ չարին:—Օրէնքի իշխանութիւնը մինչև այնտեղ էր հասնում միայն, որ ծշմարտութեան սկզբունքի գէմ եղած հրապարակային զանցառութիւնը պատմել կարող էր, նա պահանջում էր, որ մարդիկ գոնէ որոշ սահմաններում հնազանդին այդ սկզբունքին՝ երբ մի սուրբ վկայութեամբ հաստատել են իրենց խօսքը, զրժելով չանարգեն այդ սրբութիւնը: Քրիստոս ցանկանում է, որ ծշմարտութիւնը մշտական օրէնք լինի մեր հոգւոյ համար, մեր ներքին կեանքում, որ մենք իմանալով, թէ Աստուծ մեր ամեն մի խօսքի համար վկայ է արդէն իսկ, և թէ ամեն իր երկնքի կամ երկրի վերայ նորանից է ստանում իւր նշանակութիւնն ու սրբութիւնը, այնպէս չվարուինք, որ կարծես Աստուծոյ վկայութիւնն աւելի պակաս զին ունի մեր աշքում, քան մի ուրիշը, և հետեւար ծշմարտութեան այն օրէնքը, որ մեր հոգւոյ բնական ազատ պահանջը պէտք է լինէր, նախապաշտումների գերի դարձնենք:—Օրէնքը, իրեւ պաշտպան արգարարութեան, մարդոց անսանձ չարութեան և վրեժինդրութեան ոզին զապելու համար որոշում էր, որ ամեն ոք իրեն հասցրած չարեաց փոխարէն հաւասար հաստացումն միայն իրաւունք ունենայ

պահանջելու՝ հանած ատամի փոխարէն առամ հանած աշքի փոխարէն աշք, և ոչ աւելի։ Քրիստոս բացարում էր, որ իսկական արդարութիւնն այն ժամանակ միայն կթագաւորէ աշխարհի վերայ, երբ չարութեան դէմ բարութեան զէնքով կռուենք, մինչեռ օրէնքը նորանով է հասկանալի գարձնում թէ արդարութիւնը կայ, որ մարդու կաշուի վերայ զգալ է տալիս արդարութեան պահանջը՝ քրիստոնէական անշիշաբարութիւնը և բարութիւնը մինչև սրտի խորքն են թափանցում։ Հոգեւոյ աշքի առաջ կենդանի կերպով պատկերացնում։ Թէ ինչքան աւելի բարձր ու գենմ է երկնքից բլիսող սիրոյ, բարութեան արդարութեան սկզբունքը՝ մարմարական ստոր, եսական կրպերի թերագրած դրէմինդրութիւնից ու չարակամութիւնից։

Այս բոլորից եզրակացնում ենք ուրեմն, որ Քրիստոսի ցոյց տուած արդարութեան առանձնայատուկ կողմն է նորա ներքին, հոգեւոր բնաւորութիւնը։ Աղքատ հոգին, ընդունելով իւր մէջ նրկնքի արքայութեան սերմը՝ պէտք է բեղմնաւորելով ամեր և զարդացնէր Աստուծոյ արդարութեան մի բոյս որ արժանի լինէր նորա թագաւորութեան գրախոր փոխագրուելու. այդ արդարութիւնը պէտք է պտուղներ տար, որոնցից իւրաքանչիւրը հոգու անմիջական արդիւնքն է, ներքին տրամադրութեան անշրաժեշտ արտայացնութիւնը։ Եւ Քրիստոս իրաւամբ կարող էր ասել, թէ նա աստուածային օրէնքի ոչ մի նշանախեցը անպէտք չէր համարում և անկատար չէր թողնում օրովհետեւ նա իւրաքանչիւր մի կէտում թափանցում էր օրէնքի խորքը, որոնում էր աստուածային կամքի այն գիտումը, որի արտայացնութիւն էր եղել այդ օրէնքը, և սովորեցնում էր այդ զիտման համեմատ գործել՝ հոգւով և ճշշմարտութեամբ, և ոչ լոկ արտաքին նշաններով։

Այսպէս վարուում է նա ոչ միայն բարյական, այլ և ծիսական օրէնքների նկատմամբ։ Յայտնի է, որ Փրկիչը պահում էր իւր ժողովրդի սովորութիւնները, աստուածաշատական կարգերը։ մեծ տօներին նա նրաւաղէմ ու խոտ էր զնում տաճարը

իւր չօր տուն էր անուանում վճարում էր մինչև անդամ տաճարի տուքը, իւր բժշկած բորոտներին պատուիրում էր քահանայի մօտ գնուլ և Մովսէսի տուած պատուերները կատարել կատարում էր հանդիսաւոր կերպով պատէքը ևլն, սակայն քանի որ ծիսականը աւելի սերտ կապ ունի արտաքին հանգամանքների հետ, ժամանակի և տեղի պայմաններից է կախուած շատ անգամ, և ուրեմն աւելի շուտ փոփոխուել և զեղծումների են թարգուել կարող է քան բարյականը՝ նաըստ երեւութին աւելի մեծ չափով ազատութիւն է գործ գնում այստեղ և հեռանում մովսիսական օրէնքի գծած սահմաններից։ Նախ սկզբունքով մերժում է նա այն ամէնը, ինչ որ բուն օրէնքին չէ պատկանում, այլ փարիսեցիների ու զպիրների աւելացրածն է, ծերերի աւանդութիւնն է, և ապա պախարկում է այն առաւելութիւնը, որ փարիսեցիները տալիս էին ծիսական պատուերներին բարյականի հակառակ (Մկ. Հ. 1-15)։ Նա ապացուցանում է, որ այդպիսի վարմունքը բոլորովին անհամապատասխան է Աստուծոյ կամաց և օրէնքը լրացնելու փոխարէն իսկապէս քակտումէր ուստի վերականգնում է արդէն մարգարէների քարոզած այն սկզբունքը, թէ Աստուծոյ համար ողորմութիւնը աւելի հաճելի է քան զոհը (Ովկ. Զ. 6. Մատթ. Թ. 13)։ Եւ մինչ փալիսեցին աւելի մեծ առաքինութիւն էր համարում այն բարիքը որ մի իսրայէլացի իւր որդիական պարագը, աստուածային տաճարաննեայ պատուիրաներից մէկը, կատարելու համար իւր ծնողաց վերայ պէտք է գործադրէր տանել Աստուծոյ նուիրել տաճարի զանձանակը ձգել Քրիստոս ընդհակառակն պահանջում է, թողնել Աստուծոյ սեղանի առաջ բերած նուէրը, զնալ նախ ընկերի հետ հաշտուել և ապա գալ իւր նուէրը մատուցանել (Մկ. Հ. 9-13 և Մատթ. Ծ. 23-24)։ Դորանով ի հարկ է նա չի կամենում ասել, թէ դէպի ծնողը կամ գէպի ընկերն ունեցած պարտականութիւններն աւելի բարձր պէտք է համարուին քան գէպի Աստուած ունեցածները, այլ որ մենք աւելի ուղիղ կերպով ենք կատարած լինում մեր պարտքը դէպի Աստուած, երբ

Նորա հաստատած բարոյական օրէնքների համաձայն ենք վերաբերուում դէպի մեր մերձաւորներու քան երբ արտաքին արարողութիւններով ու նուերներով կամենում ենք հաճյանալ Նորան, և որ ծիսական կարգերը այն ժամանակ են միայն պահում իրենց կրօնական նշանակութիւնը, երբ բնական արտայացութիւն են անկեղծ զգացումների, բարյուպէս մաքուը Սրտի:

Աւետարանն ընծայումէ, մեզ գոնէ մի գեղեցիկ օրինակ թէ ինչպէս երբեմն նոյն իսկ ուղիղ սկզբունքներով գործադրուած ծիսականը պէտք է գերադաս համարուի առերեսոյթ բարոյականց: Երբ որ Սիմոն Բորոտի տանը աշակերտները նեղացան, թէ ինչու բարեպաշտ կինը թափեց թանկազին իւղը Յիսուսի վերայի փոխանակ նորա գնով աղքատներին բարերարութիւն անելու՝ Յիսուս յանդիմանեց իւր աշակերտներին, իսկ կնոջ արարքն այնչափ բարձր գնահատեց, որ իւր աւետարանի հետ զուգընթաց ամբողջ աշխարհում պատմուելու արժանի տեսաւ: Ինչու որովհետեւ, առում է նա, աղքատներին բարի անելու մարդիկ միշտ ժամանակ ունին, և իթէ ցանկութիւն լինի՝ միջոց երբեք չի պակասի, բայց հանդիսաւոր բոպէներ կեանքի մեջ, երբ մարդ այնպէս մօտիկ զգայ իրեն Տիրոջ, այնպիսի բուռն կրօնական զգացումներով լեցուած լինի: Ինչպէս էր անշուշտ իւղաբեր կինը՝ շատ քիչ են պատահում, բոպէներ են դոքա, երբ մարդ իւր զգացումները խօսքով արտայայտել չեն կարող, երբ մի ինքնարերական անբարբառ արարողութեան մէջ աւելի շատ հօդի և միտք է բովանդակում: Քան երկար ու բարակ ձառերի մէջ, և ահա այդպիսի անկեղծ արտայայտութիւններն է, որ զնահատում է Փրկիչն ու իւր աւետարանի սկզբունք դարձնում՝ ոչ ողորմութիւնն ըստ ինքեան, իրբե արտաքին արարք, և ոչ զոհը այլ այն զգացմունքը այն զարգարքը, որ թագնուում է նոցա յետեւ: Այսպէս և Նորա շարաթը սուրբ պահելու առթիւ փարիսեցիների հետ ունեցած վէճերը ոչ միայն նպատակ չունին ծէսն իրեւ անկարեսը ինչ ցոյց տալ, այլ ընդ հակառակն որոշում են նոցա իսկական բարդութիւնը: Արդու Որդին տէր լինելով շարաթու (Մկ.

Բ. 28) գիտէ և գործադրել այն ինչպէս պէտքըն է՝ ուսուցանել որ մարդիկ կուռք չգարձնեն իրենց համար նորա սրբութիւնը, չզոհեն նորա տառական նշանակութեան առաջ իրենց ամենանուբրական պարտականութիւնները, այլ ըմբռնելով, որ շարաթը մարդու համար է՝ նորա ժամանակը կարգաւորելու, նորա բոլոր գործերի նպատակ և հանգիստ կազմող Աստուծոյ հետ յարաբերութեան սուրբ ժամեր հաստատելու համար՝ գործ զնեն այդ ժամերը միրաւի իրեւ հոգեոր հանգստութեան ժամեր, Աստուծոյ պաշտամանը նուիրուած ժամեր՝ սրտի և ոչ շրմանց ու ձեռաց նուիրաբերութեամբ միայն:

Այնուամենայնիւ Քրիստոսի կազմած համայնքի մէջ չին Ռւխտի բազմաթիւ ծիսական որոշումներն անհրաժեշտաբար անգործադրի պէտք է մնային: շատ բան կար այսաեղ, որ իրեւ չին տիկ աւետարանի վարդապետութեան նոր, եռացող զինին տանել չէր կարող: Քրիստոս նոցա տեղ նորերն է զնում յիրաւի, բայց ոչ եղածը լուծելով, այլ լուցանելով՝ սոտերականի, անցողականի փոխարէն կատարեալը, մշտնջենաւորն ընծայելով: Թէ և ծերակոյտի առաջ նորան զատապարտելու համար բերած վկայութիւնը, թէ նա նրուսաղէմի տաճարը քակելու ցանկութիւն է յայտնել՝ չար և սուտ զրապարտութիւն էր, բայց երբ նա խոստացաւ այնաեղ լինելը ուր հաւատացողներից երկուոր կամ երեքը միասին կգտնուէին, և նոցա աղօթքը լսելի անել իւր չօր առաջ՝ գորանով արդէն մարմնաւոր, որոց տեղի հետ կապուած տաճարի կարեռութիւնն ըստ ինքեան վերանում էր: Թէ և նա իւրայիններին չէ արգելում զոհեր առնել, ճաշակում՝ ոչ նոցա հետ պատէքի զոհը, բայց այն օրուանից, երբ Նորա անարատ արիւնը խաչի վերայ թափուեցաւ, նոր ուխտ հաստատելով փրկանք դառնարով շատերի համար՝ ապականացու զոհերի արիւնը կորցրեց բնականարար իւր նշանակութիւնը: Նորա կանգնած անձեռագործ տաճարի մէջ, ուր պիտի մողովուէին չօր հոգւով և ծշմարտութեամբ երկապագողները, կատարեալ ազատութիւն է տիրում՝ ինչպէս բարյուպէս բարյական, այնպէս և կրօնական զգացումները արտայայտելու ե-

զանակի նկատմամբ. որովհետև Հոգին է այս-  
տեղ որոշովը և ոչ գիրը:

Այս և այդ հոգեոր, ազատ կողմն է,  
կրկնում ենք, որ կեանքի բոլոր պայման-  
ների համար, կազմում է Քրիստոսի արդարու-  
թեան, Երկնքի արքայութիւն տանող արդա-  
րութեան՝ զիմանը յատկանիցը, չին կտակա-  
րանի օրէնքի հետ բարդատելով: Եորա եր-  
կորդ, ոչ պակաս կարերութիւն ունեցող  
յատկանիցն է այն, որ մինչգեռ թէ չին կտա-  
կարանը, և թէ առհասարակ ամեն օրէնք,  
մարդոց առաջ գնում են բազմաթիւ պատուեր-  
ներ, որոնցից իւրաքանչիւրն առանձին առան-  
ձին կտարել պէտք է, բոլորը ճշգութեամբ կտ-  
արած լինելու համար՝ Քրիստոս մի կենդլոն  
է որոշում: որի շուրջ պատում են բոլոր օ-  
րէնքները, մի ընդհանուր մեծ պատուիրան,  
որից լոյս են ստանում: որի ուղիղ ըմբռնմամբ  
և գործադրութեամբ ըմբռնուած և գործա-  
դրուած են լինում բոլոր միւսները — այդ է  
առ Աստուած և առ ընկերն սիրոյ միացեալ  
պատուիրանը:

Կ. Վ.



## ԼԵՒՄՆ ԺԳ. ՊԵՊԸ

Ե Ւ

ՊԱՊԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՎԱՆԱԿԸ.

Christliche Welt թերթի մէջ լոյս է տեսնում  
Լևոն ԺԳ. պապի մի շատ հետաքրիր կենսագրու-  
թիւնը, որից մի քանի տեղեկութիւններ առնելով՝  
յառաջ ենք բերում նորա պապական աթոռ բար-  
ձրանալու մասին պատմուածը, իրքն օրինակ, թէ  
իշխան են ընտրուում և իշխանութիւն ստանձնում  
պապերը:

Լևոն ԺԳ., որի հսկական անունն եղել է  
Քիոակին Պետքի, ծնուած է 1810 թ.-ի մարտի  
2-ին Լատինի մի գիւղում՝ ունեսոր հասարակ ծնող-  
ներից, թէև 1832 թուին իւր պաշտպան Սալա-  
կարդինալի աշխատութեամբ նա իրքն պատրիկ ըն-  
դունուել է այսպէս կոչուած «Ազնուական եկեղե-  
ցականների ակումբի» մէջ, որով նորա առաջ ծա-  
նապարհ է բացուել գէպի բարձր եկեղ. աստի-  
ճաններ: Եւր սկզբնական կրթութիւնը ստացել է  
նա եզուփառների մօտ, որոնք 1814 թ.-ին ազատուե-

լով նազոլէսնի ազդեցութեամբ առ ժամանակ ի-  
րենց գէմ հանած հալածանքից, արագութեամբ  
վերահաստատուել էին իրենց նախկին զիրքերում  
և ի միջի այլոց բաց էին արել Ափտերոս քաղա-  
քում մի աչքի ընկնող գպրոց, ուր և յաջորդ  
տարին ընդունուեցաւ փոքրիկ Քիոակինն իւր Յով-  
սէփ եղրօր հետ: — Թէ ինչպէս միակողմանի էր ու-  
սուցումն այդպիսի կրթարաններում, բաւական է  
յիշել մրցանակներով աւարտած մի 16 տարեկան պա-  
տանու օրինակը, որ լրջօրէն հարցուած էր, թէ  
արգեօք ճշմարիտ է: որ լուսինը քիթ բերան, աչք,  
ունի: — Ապագայ պապը գպրոցում մնաց մինչև  
1824 թ.-ը և, թէպէտ ընդունակ ու յառաջադէմ  
իւր պարապմունքների մէջ՝ բայց կտրուած լինելով  
սոլորովին արտաքին աշխարհից, զարգացաւ լոկ  
իրքն կրօնաւոր զուրկ ամեն տեսակ կենքանի յօյ-  
զերից: այդ է երկի պատճառը, որ նորա ստանա-  
ւորով, իւր կեանքի մասին պատմածներն այնչափ  
սառն են, արուեստական: — Մինչ այն՝ պապական  
աթոռ էր բարձրացել Լևոն ԺԳ. և եզուփառների  
ձեռքն յանձնել «Նորվիժական կոլլէջը», որի ա-  
ռաջին 1400 ուսանողների թուում եղան նաև եր-  
կու Պետքիները, Այդտեղ ևս Քիոակիննուն թէնէ  
առողջութեամբ տկար, յաջողութեամբ աւարտաց  
ու ընտելացաւ մանաւագն ճարտասանական արուես-  
տին: ապա 1830 թ.-ին ուսանող գրուեցաւ «Գրի-  
գորեան համալսարանին», ուր կրկն եզուփառներն  
էին նորա ուսուցչապետները: 1832 թ.-ին նա ձեռք  
բերաւ աստուածարանութեան գոկտորի աստիճա-  
նը, 1835-ին մի փառաւոր մրցանակ և 1837 թ.-ին  
իրաւաբանութեան գոկտորի աստիճանը, երբ և  
քահանայական ձեռնադրութիւնն ընդունեց: Յա-  
ջորդ տարին նա իրքն կառավարիչ ուղղմելի քաղաքական իշ-  
խանութեան ներքոյ ամենախեղճ և խառնակ վիճակի  
էր ներկայացնում: այդտեղ շատ շուտով կարողացաւ  
ցոյց տալ իւր փարչական ընդունակութիւնները և  
նման բարեկարգութիւն մտցնելու համար Պերո-  
ջիա քաղաքը տեղափոխուեցաւ: ուր չնայած խիստ  
աննպաստ հանգամանքներին այնչափ յաջողութիւն  
ձեռք բերեց: որ քաղաքացիները ցանկացան յետոյ  
նորան եպիսկոպոս ունենալ: Բայց Գրիգոր ԺԳ. պապը  
առանձին բարեհաճութիւն ցոյց տուաւ գէպի նա  
Քրիստուկի պապական նույն իսա նշանակելով  
1843 թ.-ին: Դորա համար հեկեղեցական աւելի  
բարձր աստիճան հարկաւոր էր, ուստի նա եպիս-  
կոպոս ձեռնադրուեցաւ և ընդունեց «Ռամիէտտի  
արքեպիսկոպոս» անուանական տիտղոսը: Ճանապար-  
հոգութեան միջոցին նա սկսեց ֆրանսերէն սովոր-  
ութել, որ և մինչև այժմ առանձին սիրով է գործա-  
ծում: Քրիստուկում թագուհու ոգնութեամբ նա  
յաջող կերպով պաշտպանեց կոմուլիկութեան շահե-  
րը և սիրելի եղաւ նոյն իսկ բազոքական Լեռոպդ Ա.